ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԱՐԱՐԱՏԻՄԱՐԶԻՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՂԵԿԱՎԱՐ

ՀայաստանիՀանրապետության ԱրարատիմարզիՄասիսհամայնք
e-mail:masisg.ararat@mta.gov.am

17.12.2015թ.

Թիվ 354

Արարատի մարզպետ՝

պարոն Ռ.Աբրահամյանին

Ներկայացվում է Մասիս համայնքի ավագանու թիվ 09 որոշման կրկնօրինակը:

Առդիր 4(չորս) թերթից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ / Ս.ՄԱՐԳԱՐՅԱՆ/

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի մասիս համայնք
e-mail:masisg.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 դեկտեմբերի 2015թվականի 9 -Ն

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 10 –րդ և 11 –րդ հոդվածների պահանջներով՝

Ավագանին որոշեց՝

Հաստատել Մասիս համայնքի 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի :

Ավագանու անդամներ՝

Կողմ - 7 , ձեռնպահ -0 , դեմ -0

Վ. Օհանյան
Կ. Մարգարյան
Գ. Ղազարյան
Ս.Մարգսյան
Գ. Խաչատրյան
Ն. Մխիթարյան
Գ.Մելքոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Մասիս համայնքի ավագանու
14.12.2015թ -ի թիվ 09 որոշման

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 թ – ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծի համապատասխան նոր շենքերի,շինությունների(ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է .

Հիմնական օբյեկտների համար

1) մինչև 300 քառ.մ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային տների) , ինչպես նաև մինչև 200 քառ.մ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ:

2) սույն կետի « 1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար

ա) 201 –ից մինչև 5000քառ.մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 30000 դրամ
բ) 501 – ից մինչև 1000 քառ.մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 50000 դրամ
գ) 1001 և ավելի քառ.մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 70000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառ.մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 3000 դրամ

4) 20 և ավելի քառ. մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 5000 դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգման արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվության չպահանջվող դեպքերի համար) , եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
1) չի նախատեսվում կցակառույցների ,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա)

հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ
3.Համայնքի վարչական տարածքում շենքերի ,շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ 5000 դրամ
4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքների թույլտվության համար , հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում , յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000 դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում , յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօդյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար , յուրաքանչյուր օրվա համար՝ 200 դրամ :

2) հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների , հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար՝ 150000 դրամ:

6. Համայնքի տարածքում խաղատները հանրային սննդի օբյեկտները , բաղնիքները (սաունաները) , զվարճանքի օբյեկտները ժամը 24 .00 –ից հետո աշխատելու թույլտվություն ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 60000
3) բաղնիքների , սաունաների համար՝ 300000 դրամ
4) խաղատների համար՝ 700000 դրամ
5) շահումներով խաղերի կազամակերպման համար՝ 300000 դրամ
6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ

7.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝ այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը սահմանվում է ընթացիկ տարվա համար՝ 2000 դրամ:

Տեղական վճարներ

1. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու , հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 դրամ :

2. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխելու , վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական և տնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու շինարարության ավարտը փաստագրելու համար տեղական ինքնքակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 դրամ:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կախված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից՝ 1000 դրամ :

4.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար՝ յուրաքանչյուր շնչի համար ամսեկան 10 դրամ:

Սույն որոշման 1,2,3 կետերով սահմանված դրույքաչափերի նկատմամբ կիրառել 0,5 գործակիցը :

Աշխատակազմի ղեկավար՝ Ա.Կարապետյան